

Թիւ 25698  
Մարտ 22, 1978

Արժանաշնորհ  
Տ. Գէորգ ԲՅՆՅ. Առաքելեան  
Հովիւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ  
Նախագահ Ժխական Խորհուրդի  
Պինկհամթըն.

Սիրելի Տէր Գէորգ,

Ստացած ենք Մարտ 14, 1978 թուակիր ձեր տեղեկագիրը, որով կը հաղորդէք  
թէ ձեր նախագահութեամբ Յունուար 22ին գումարուած համայնրիդ Ժխական Ժողո-  
վին մէջ կատարուած է Ժխական Խորհուրդի չորս անդամոց ընտրութիւնը:

Այսու գիրով կը վաւերացնենք Ժխական Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ  
ստորեւ տրուած ցանկին:

Հաճեցէք փութով Առաջնորդարան ղրկել Ժխական Խորհուրդի նորընտիր Դիւանի  
անդամոց անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Օրհնելով Ժխական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք ձեզի եւ ձեր պաշտօ-  
նակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի պայծառութիւն  
Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնրիդ մեր սիրեցեալ ժողովուր-  
դին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ

Հտուրդա Սերայտարեան  
ճորճ Ռէճէպեան  
Արթըր Գրամեան  
Գարըլ Պոկտասարեան